ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«____» _____ 2010թ. N _____

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱՎԱՆԻ ԹԻՎ 1 ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 25-ի «Իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների հաշվառման կարգը հաստատելու մասին» հ.670 որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի «բ» ենթակետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Դադարեցնել Երևանի համայնքային ենթակայության «Ավանի թիվ 1 կերպարվեստի դպրոց» հիմնարկի գործունեությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱՎԱՆԻ ԹԻՎ 1 ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ավանի թիվ 1 կերպարվեստի դպրոց» հիմնարկը ստեղծվել է 1998 թվականից, որը առ այսօր որևէ գործունեություն չի ծավալել, դպրոցին չի հատկացվել որևէ շինություն կամ գույք: Ներկայումս Ավան վարչական շրջանում գործում են «Գ. Բուդաղյանի անվան թիվ 1 Արվեստի դպրոց» և «Մշակույթի տուն» ՀՈԱԿ-ները, որոնց ծառայությունների ցանկում ընդգրկված են այն բոլոր ուղղությունները, որոնք կիրականացներ կերպարվեստի դպրոցը՝ գործունեություն ծավալելու դեպքում:

Վերոգրյալ հանգամանքից ելնելով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը, առաջարկվում է դադարեցնել «Ավանի թիվ 1 կերպարվեստի դպրոց» հիմնարկի գործունեությունը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱՎԱՆԻ ԹԻՎ 1 ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի համայնքային ենթակայության «Ավանի թիվ 1 կերպարվեստի դպրոց» հիմնարկի գործունեությունը դադարեցնելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ